վարժական համալսարան, Երևանի տնտեսագիտական համալսարան, «Գլաձոր» համալսարան, «Հյուսիսային» համալսարան, «Ինտերլինգվա» համալսարան, Գեղեցիկ արվեստների համալսարան և այլն) ուսանողներ և դասախոսներ:

Առաջին հանգրվանը Խոր Վիրապի վանքն էր, ուր ուխտավորները միասնաբար աղոթեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Այնուհետև մեկնեցին Նորավանք, որտեղ նրանց դիմավորեցին և ողջունեցին ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը և Նորավանքի հոգևոր հովիվ Տ. Սահակ քահանա Մարտիրոսյանը: Տ. Սահակ քահանան ուխտավորներին հանգամանորեն ներկայացրեց Նորավանքի պատմությունը:

Երիտասարդները Նորավանքում ևս իրենց աղոթքը կատարեցին Հայրենիքի խաղաղության, Եկեղեցու պայծառության և հայ ժողովրդի բարօրության համար:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇԻՐԻՄԻՆ

Ուխտագնացությունը երկրից դեպի Աստված հոգևոր ճամփորդություն է՝ միջնորդված այն սրբավայրերով, որոնք մեծ ուժականությամբ ու բուժիչ հատկություններով իրենց են ձգում ուխտավոր հավատացյալին:

Ապրիլի 17-ին Գուգարաց թեմի առաջնորդարանը, թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի օրհնությամբ և առաջնորդությամբ, կազմակերպել էր ուխտագնացություն դեպի Օձուն՝ ի հիշատակ Սուրբ Հովհան Օձնեցի կաթողիկոսի վախճանման 1280-ամյակի: Այս տարի ուխտագնացությանը մասնակցեցին Սպիտակի վարժարանների ուսանողները՝ Տ. Ավետիք աբդ. Սողոմոնյանի գլխավորությամբ, Արևաշողի բարձր դասարանների աշակերտները՝ Տ. Մովսես քհն. Աշուրյանի գլխավորությամբ, Ալավերդու ուսանողները՝ Տ. Միքայել քհն. Շաղոյանի գլխավորությամբ, Ստեփանավանի ուսանողները՝ Տ. Վռամ աբդ. Ղազարյանի գլխավորությամբ: Վանաձորից մասնակցում էին Եկեղեցասեր երիտասարդաց միության անդամներ, «Ստեղծենք հնարավորություններ խուլերի համար» թեմական ծրագրի շահառուներ, Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու երգչախումբը՝ Տ. Ստեփանոս քհն. Մարգարյանի և Տ. Վահան քհն. Ազարյանի գլխավորությամբ: ՎՊՄԻ-ի ռեկտոր տիար Գուրգեն Խաչատրյանի գլխավորությամբ ուխտագնացությանը մասնակցեցին թվով 60 ուսանողներ և դասախոսներ:

Օձունի Սուրբ Աստվածածին եկեղեցում համայնքի հովիվ Արժանապատիվ Տ. Վրթանես քհն. Բաղալյանը մատուցեց Սուրբ Պատարագ: Հավարտ Պատարագի մատուցվեց ավանդական մատաղ:

Պատարագից հետո ուխտավորները մեկնեցին Արդվի, ուր ամփոփված է Սուրբ Հովհան Օձնեցու աճյունը, որտեղ կատարվեց երկրպագություն Սրբի շիրիմին, ուր և ուխտավորներին օրհնության խոսքով դիմեց Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ